ՄԻՋԱՏԱԿԵՐ ԲՈՅՍԵՐԸ

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆԻ

Ամենքը գիտեն, որ բույսերը և անասունները՝ թէև կենդանի օրգանիզմներ են և ունեն շատ նմանութիւն իրանց կեանքի գլխաւոր մոմենտներում, բայց միա կողմից կան մի քանի որոշ գծեր, որոնցով բույսերը զանազանւում են անասուններից։ Ամենանշանաւորն է համարւում գիտութեան մէջ այն տարբերութիւնը, որը նկատւում է անասունների և բույսերի կերակրելու մէջ։

Անասունների համար հարկաւոր են միս, կաթ, օսլայ (крахмалъ), շաքար, իւղ, մի խօսքով հարկաւոր են բարդ քիմիական կազմութիւն ունեցող նիւթեր։ Բույսերը՝ ընդհակառակը՝ կերակրւում են հասարակ հանքային նիւթերով։

Տերևների օգնութեամբ բույսերը կլանում են օդի մէջ գտնւող ածխաթթուները, իսկ մնացած կարևոր հանքային նիւթերը թափանցում են ջրի հետ բույսերի արմատների մէջ գտնւելը։

Եթէ այդ հանքային նիւթերի տեղը բույսերին տանք միս, օսլայ կամ կաթ, բույսերը ոչ միայն չեն զարգանալ, այլ և շուտով կը մեռնեն սովածութիւնից։

Այս ընդհանուր օրէնք է, որը ընդունում են բոլոր գիտնականները։ Առաջ բնագէտները համոզած էին, որ այդ օրէնքը անպայման է, չ'ունի բացառութիւն։

Հասկանալի է, թէ ինչ մեծ զարմանք պիտի յարուցանէր ուսումնականների շրջանում Դարվինի այն զեկուցումը, որ արւեց 1874 թւին և որի մէջ նա ապացուցել է, որ կան անասունների պէս կերակրւող բույսեր։

Դարվինի ասելով այդ բույսերը կերակրւում են մսով, ձուով. այդ դեռ բաւական չէ՝ նոքա որսում են զանազան միջատներ և ուտում են նրանց։ Հէնց այդ պատճառով նրանք անուանւեցան միջատակեր բույսեր։

Այժմ գտնւած են մօտ 30 միջատակեր բույսեր, որոնցից մի քանիսի հետ ցանկանում եմ ծանօթացնել ընթերցողին։

*
* *

Ամերիկայում ապրում է մի բույս, որին գիտնականները տուել են Dionaea muscipula (ճանճ ուտող Դիոնէա) անունը։ Երբ առաջին անգամ տեսնում էք այդ բույսը, նա սկզբում ոչնչով չի գրաւում ձեր ուշադրութիւնը. դա մի փոքրիկ կանաչ բույս է, որի տերևները հաւաքած միասին բոլորաձև կպած են բունի (стебель) ներքին մասում։ Բայց եթէ մենք ուշադրութեամբ դիտենք Dionaea muscipula'ի տերևները, անշուշտ կը տեսնենք, որ վերջինները տարբերւում են մեզ ծանօթ բույսերի տերևներից։

Առհասարակ պիտի ասեմ, որ միջատակեր բույսերը որսում են միջատներ իրանց տերևների օգնութեամբ. այդ պատճառով նոցա տերևները յարմարեցրած են այդ գործողութեան համար։

Ճանճակեր Դիոնէայի տերևը բաղկացած է երկու մասերից, որոնք միանում են իրար հետ այնպէս, որ նրանց մէջ կազմւում է անկիւն։ Աչքով այդ բույսի տերևը տափարակ չէ, այլ իւր ձևով մի փոքր նմանւում է մեր ձեռքերին այն դրութեան մէջ, երբ մենք միացնելով երկու ձեռքերը ցանկանում ենք նրանցով ջուր վերցնել մի որ և է ամանից։

Տերևի ներքին մակերևոյթը ունի զարմանալի զգայնութիւն. բաւական է մի փոքր դրգռել նրան, որ տերևի երկու մասերը շարժեն, մօտենան իրար և ամուր կպչեն մէկը միւսին։

Եթէ այդ բույսի տերևի վերայ գցէք մի որ և է անմարսելի բան, օրինակ ապակիի կտոր, քար, տերևի երկու մասերը կը կպչեն իրար՝ ամուր սեղմելով իրանց մէջ ապակիի կամ քարի կտորը։ Բայց չը կարողանալով մարսել, օգտուել քարիցը կամ ապակիիցը՝ տերևը շուտով սկսում է բացուել։

Այլապէս է պատահում, երբ տերևի վերայ ընկնում է մի որ և է միջատ. այս դէպքում տերևը փակուելով էլ շուտ չէ բացւում. Միջատը մնում է սեղմած տերևի երկու մասերի մէջ. «երբեմն նոքա (տերևի երկու մասերը) այնպիսի ուժով հուպ են տալիս բռնած միջատին, որ նրա կերպարանքը պարզ գծագրւում է փակած տերևի դրսի կողմից» [1])։

Տերևը փակած մնում է մի քանի օր. այդ ժամանակի ընթացքում նա ծծում է միջատից բոլոր հիւթերը, որոնք կարող են մարսուել՝ թողնելով միայն անպէտք մասերը։ Եւ իրաւ, երբ տերևը բացւում է, նրա մէջ մնացած են լինում միայն միջատի թեերը, չոչափումները...

Ճանճակեր Դիոնէան կերակրւում է ոչ թէ միայն միջատներով, այլ և մսով, եփած ձուով։ Այս բանը ապացուցեց Դարվինը փորձերով։

Աղպիսով կասկած չը կայ, որ Dionaea mussipula'ն կերակրւում այնպէս՝ ինչպէս մի որ և է կենդանի։

Բայց մեր զարմանքը կրկնապատկվում է, երբ լսում ենք այս հարցին վերաբերեալ մանրամասնությունները։ Բանը նրանում է, որ միսը, ձուն և միս նուշանման նյութերը մարսում են կենդանիների ստամոքսում չնորհիվ մի հեղուկի, որը, դուրս թափելով ստամոքսի պատերից, խառնվում է կերակրի հետ։ Այդ հեղուկը պեպսին են անվանում։ Երբ մի որ և է պատճառով պեպսինի քանակությունը պակասում է, դրա համեմատ թուլանում է և կենդանիների մարսողությունը։

Ուրեմն կենդանիների օրգանիզմը չի կարող մարսել նրան, մինչև որ նա չը փոխվի պեպսինի ազդեցության տակ։

Իսկ միջատակեր բույսերը, ունենալ արդեօք նրանք նույնպես մի որ և է հեղուկ իրանց մարմնի մեջ կերակուրը մարսեցնելու համար։ Դարվինի հետազոտությունները ցույց տվին, որ վերոյիշյալ բույսերը այս բանում էլ կատարյալ նմանություն ունին կենդանիների հետ։ Երբ բույսը բռնում է մի որ և է միջատ և փակում նրան տերևի մեջ, վերջինից սկսում է դուրս թափվել մի հեղուկ, որի ազդեցության տակ փոփոխվում և մարսվում է միջատի մարմինը։ Այդ հեղուկը իւր յատկություններով ամենին նմանություն ունի վերոյիշյալ պեպսինի հետ։

Ուրեմն Dionæa muscipula'ի տերևը ոչ միայն միջատներ բռնելու գործիք է, այլ և մի օրգան է, որի մեջ կատարվում է բույսի կերակրի մարսողությունը։

Պետերբուրգի շրջակայքում գտնվում է մեծ քանակությամբ մի ուրիշ միջատակեր բույս—Drosera rotundifolia, որի տերևները ունին չ ջանակաձև տեսք և ծածկված են երկար թելի նման ատելածներով (ворсинки)։ Մի տերևի վերայ լինում են մոտավորապես 200 այդ տեսակ ատելածքներ։ Ամեն մի ատելածք վերջանում է գնդակաձև ծայրով, որից հոսում է մի ինչ որ թանձր, կպչող հեղուկ։

Հենց որ մի անզգույշ միջատ նստում է Drosera'ի տերևի վերայ, նա իսկույն կպչում է թանձր հեղուկին։ Քանի շատ ջանք է գործում միջատը թակարդից ազատվելու համար, այնքան ատելի ու ատելի է խրվում հեղուկի մեջ։ Իսկ տերևի շոշափուկները (այդպես են անվանում վերոյիշյալ ատելածքները), զրգռվելով միջատի անհնազանդությունից, սկսում են ատելի ու ատելի շատ դուրս թափել կպչող հեղուկը։ Այդ դեռ բավական չէ։ միջատից հեռու գտնվող շոշափուկներն էլ շուտով սկսում են կռանալ, թեքվել դեպի միջատը, որը շրջապատվում է շոշափուկների գնդակաձև գլուխներով և թաղվում նրանցից հոսող թանձր հեղուկի մեջ։

Ծծելով միջատի մարմնից բոլոր հյութերը և թողնելով անպէտք մասերը, շոշափուկները նորից բաց ձգվում են իրանց դիրքին, ուղղվում են՝ սպասելով նոր որսի։

Փնտրելով շոշափուկներից հոսող հեղուկը Դարվինը տեսավ, որ նա այնքան նման է կենդանիների ի պեպսինին, որ զգալի չափով է ջոկվում

վերջինից։ Ալդրովանդ Drosera'ի հեղուկը երկու նշանակութիւն ունի. նա թէ միջոց է միջատներ որսալու համար, և թէ ծառայում է որպէս պեպսին, փոխելով և դիւրամարսելի անելով միջատների մարմինը։

Աւելի ևս տարօրինակ է կազմած „Nepenthes destillatoria" կոչած միջատակեր բոյսի տերևը։ Մարդ մեռած է ապշած տեսնելով այդ բոյսի նկարը (Nepenthes'ը մեր կողմերի բոյս չէ)։ Տերևների տեղ բոյսից կախած են բազմաթիւ սափորներ (урночки). բանից դուրս է գալիս, որ այդ սափորները Nepenthes'ի տերևներն են, ուրիշ ոչինչ։ Միայն այդ տերևները այնպէս փոխուել են, որ նրանց դժուար է ճանաչել։ Սափորի վերևին կախած է մի առանձին աւելածք, որը ծառայում է իբրև ծածկոյթ (крышка)՝ կողպելով սափորի մուտքը կարիք եղած ժամանակը։

Այդ նկարագրութիւնից հետո է իմանալ, թէ ինչ միջոց է գործ դնում Nepenthes-ը միջատներ բռնելու ժամանակ. սափորանման տերևները ծառայում են իբրև թակարդներ միջատների համար։ Երբ սափորի բերանը բաց է, միջատները հեշտութեամբ մտնում են նրա մէջ, և միանգամ մտնելուց յետոյ էլ ազատուելու հնար չը կայ նրանց համար։ Այն գիտնականները, որոնք ուսումնասիրել են այդ բոյսը, պատմում են, որ սափորի մէջ միշտ լինում են մեռած միջատներ։

Վերջինների մարմինը մարսելու համար Nepenthes նոյնպէս արտադրում է մի հեղուկ, որը այնքան նման է կենդանիների պեպսինին, որ ստացել է «բուսական պեպսին» անունը։

Ես կը բաւականանամ այդ մի քանի միջատակեր բոյսերի նկարագրութիւնով, որովհետև մնացածները նմանւում են նրանց թէ իրանց տերևներով, և թէ միջատներ որսալու ու նրանցով կերակրուելու միջոցներով։